Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 46

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Գ. Արշակյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Ս. Բաղալյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Ներսիսյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

Մինչ օրակարգի հարցերին անցնելը, հաշվի առնելով Աշտարակ համայնքի բյուջեի ֆոնդային մասի սղությունը և ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները, Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանն առաջարկեց օրակարգի 8-րդ հարցը քննարկել նոր խմբագրությամբ:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. <<Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 146-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/

4. Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Է. Փարվանյան/

5. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի տարածքում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման վերաբերյալ համաձայնություն մասին:

/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/

6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

7. Աշտարակ համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերն աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

8. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եդեսիա, Արագածոտն և Ուշի բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

9. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

10. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրում փողոցի համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. Կոշ համայնքի ավագանու 09.01.1997թ. թիվ 2 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

13. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային և պետական սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

14. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Հարկային արտոնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>> օրենքների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի,

245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն /հավելված 1/:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - *<<Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 146-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շուշան Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, <<Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 146-Ա որոշման հավելված 5-ը և հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ:

Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - *Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ Էմմա Փարվանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Աշոտ Փարվանյանի 24.01.2025թ. թիվ 662 և Նորիկ Շաբաբյանի 03.02.2025թ. թիվ 927 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրների,

կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Աղձք բնակավայրի 4-րդ փողոցի թիվ 40 տան բնակիչ, մարտական գործողությունների ընթացքում զոհված կամավոր Արշակ Աշոտի Փարվանյանի հայր Աշոտ Վարազդատի Փարվանյանին 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեհատ բնակավայրի բնակիչների կողմից ներկայացված դիմումին՝ Նորիկ Քյարամի Շաբաբյանին 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի տարածքում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման վերաբերյալ համաձայնություն մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի բնապահպանության և գյուղատնտեսության բաժնի պետ Ս. Մխիթարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Աշտարակի համայնքապետարանում իրականացված բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման աշխատանքների վերաբերյալ հանրային լսման արդյունքը, ղեկավարվելով <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի <<Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> N 1325-Ն որոշման պահանջներով, նախնական համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու 31 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման աշխատանքներին:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն – 6 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Սիրանուշ Բոցինյանի 31.01.2025թ. N 865 և <<ԱՇՏԱՐԱԿ>> ՍՊԸ-ի տնօրեն Սուրեն Տանուտերյանի 03.02.2025թ. N 925 դիմումները և համայնքի ղեկավարի առաջարկությունները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի ա) ենթակետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, թույլատրել Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 02-087-0570-0001 ծածկագրից 18,8քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը մուտքի կազմակերպման նպատակով կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Սիրանուշ Գագիկի Բոցինյանին տրամադրելու 50 /հիսուն/ տարի ժամկետով՝ տարեկան 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ վճարով:

Թույլատրել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Ն. Սիսակյան փողոց N 14/8 հասցեում գտնվող, 02-001-0865-0220 ծածկագրով 2,4քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը դեղատան մուտքի կազմակերպման նպատակով կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ <<ԱՇՏԱՐԱԿ>> ՍՊԸ-ին տրամադրելու 50 /հիսուն/ տարի ժամկետով՝ տարեկան 10 000 /տասը հազար/ ՀՀ դրամ վճարով:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն – 7 - *Աշտարակ համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերն աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<ԷՍԹԵՅԹ>> ՍՊԸ-ի կողմից 10.12.2024թ. տրված Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայր 1-ին փողոց N 3/2, 3/3, 3/4, 3/5, 3/6 և 3/7 հասցեներով համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի շուկայական արժեքի

վերաբերյալ եզրակացությունները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով.

1. Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայր 1-ին փողոց N 3/2 հասցեում գտնվող, 02-017-0025-0012 ծածկագրով անշարժ գույքը՝ (սեփականություն հանդիսացող 118,44քմ վարչական շենք և 0,01453հա հասարակական կառուցապատման հողամաս) աճուրդ-վաճառքով օտարելու և 4 200 000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գին սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայր 1-ին փողոց N 3/3 հասցեում գտնվող, 02-017-0025-0011 ծածկագրով անշարժ գույքը՝ (սեփականություն հանդիսացող 147,96քմ վարչական շենք և 0,01775հա հասարակական կառուցապատման հողամաս) աճուրդ-վաճառքով օտարելու և 5 200 000 (հինգ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գին սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայր 1-ին փողոց N 3/4 հասցեում գտնվող, 02-017-0025-0013 ծածկագրով անշարժ գույքը՝ (սեփականություն հանդիսացող 50,73քմ վարչական շենք և 0,00586հա հասարակական կառուցապատման հողամաս) աճուրդ-վաճառքով օտարելու և 1 800 000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գին սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

4. Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայր 1-ին փողոց N 3/5 հասցեում գտնվող, 02-017-0025-0014 ծածկագրով անշարժ գույքը՝ (սեփականություն հանդիսացող 46,7քմ վարչական շենք և 0,00556հա հասարակական կառուցապատման հողամաս) աճուրդ-վաճառքով օտարելու և 1 600 000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գին սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

5.Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայր 1-ին փողոց N 3/6 հասցեում գտնվող, 02-017-0025-0010 ծածկագրով անշարժ գույքը՝ (սեփականություն հանդիսացող 87,09քմ վարչական շենք և 0,01109հա հասարակական կառուցապատման հողամաս) աճուրդ-վաճառքով օտարելու և 3 100 000 (երեք միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գին սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

6.Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայր 1-ին փողոց N 3/7 հասցեում գտնվող, 02-017-0025-0009 ծածկագրով անշարժ գույքը՝ (սեփականություն հանդիսացող 46,9քմ վարչական շենք և 0,00527հա հասարակական կառուցապատման հողամաս) աճուրդ-վաճառքով օտարելու և 1 600 000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գին սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եդեսիա, Արագածոտն և Ուշի բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 04.12.2024թ. N 2/փ-504, 10.01.2025թ. N 2/փ-3, 22.01.2025թ. N 2/փ-17 և N 2/փ-18, 30.01.2025թ. N 2/փ-36 և 31.01.2025թ. N 2/փ-49 դրական եզրակացությունները՝ Աշտարակ քաղաքում, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եդեսիա, Արագածոտն և ՈՒշի բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն և N 1920-Ն որոշումների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-068-0420-0117 ծածկագրով 0,4268հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից 0,11116հա վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

2. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-001-0300-0012 ծածկագրով

0,1528հա գյուղատնտեսական նպատակային նշանակության /կորիզավոր/ հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

3. Հաստատել Աշտարակ համայնքի Նոր Ամանոս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 02-076-0016-0004 ծածկագրով 0,12հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, կապի հողեր գործառնական նշանակության փոփոխությունը:

4. Հաստատել Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 02-080-0005-0034 ծածկագրով 0,395հա մակերեսով բնակավայրերի հողեր նպատակային նշանակության այլ հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, կապի հողեր գործառնական նշանակության փոփոխությունը:

5. Հաստատել Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 02-017-0129-0003 ծածկագրով 7,79254հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, էներգետիկայի հողեր գործառնական նշանակության փոփոխությունը:

6. Հաստատել Աշտարակ համայնքի ՈՒշի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-108-0242-0152 ծածկագրով 0,2հա գյուղատնտեսական նպատակային նշանակության /այլ հողատեսք/ հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի

քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Վարդան Գևորգյանի 26.12.2024թ. N 14890, Վահե Սարուխանյանի 27.01.2025թ. N 741 և Անդրանիկ Խաչատրյանի 29.01.2025թ. N 782՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով.

1. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0371-0001 ծածկագրով, Վարդան և Հռիփսիկ Գրիգորի Գևորգյաններին, Հասմիկ Ժորժիկի Հարությունյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,222հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /կորիզավոր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնապահական տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0698-0021 ծածկագրով, Վահե Գարիկի Սարուխանյանին սեփականության իրավունքով պատկանող 0,17965հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող և այլ հողատեսք/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /գյուղ. արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0126-0005 ծածկագրով, Վլաս, Հասմիկ, Անահիտ, Անդրանիկ և Գևորգ Խաչատրյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,18հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /խաղող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /չորանոցի կառուցման համար/ փոփոխելու

վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրում փողոցի համարակալման մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով, Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրում նոր փողոցին տալ 42 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 42-րդ փողոց:

Նոր Երզնկա բնակավայրի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - Կոշ համայնքի ավագանու 09.01.1997թ. թիվ 2 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Ռազմիկ Պավելի Վասիլյանի 21.01.2025թ. N 502 դիմումը՝ ժառանգություն ստանալու համար իրենց սեփականության իրավունքով պատկանող բնակարանի N 071456 սեփականության իրավունքի վկայականում անվան, հայրանվան և ազգանվան ուղղում կատարելու մասին, ինչպես նաև Իրա Թադևոսի Վասիլյանի և Պավել Մկրտչի Վասիլևի մահվան վկայականները, նկատի ունենալով այն փաստը, որ Աշտարակ համայնքը հանդիսանում է Կոշ համայնքի իրավահաջորդը, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ կետի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Կոշ համայնքի ավագանու 09.01.1997թ. թիվ 2 որոշման մեջ փոփոխություն կատարելու և <<Պավել Մկրտչի Վասիլյան>> բառերը փոխարինել

<<Պավել Մկրտիչի Վասիլև>>, իսկ <<Իռա Թաթոսի Վասիլյան>> բառերը փոխարինել <<Իրա Թադևոսի Վասիլյան>> բառերով:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - *Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Մուրադ Մուրադյանի 19.11.2024թ. N 13045, <<ՆԱՅԻՐԻ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ>> ՍՊԸ-ի լիազորված անձ Ռոբերտ Մաղաքյանի 15.01.2025թ. N 306, Հովիկ Գրիգորյանի 17.01.2025թ. N 377, Սամվել Վաղարշակյանի 21.01.2025թ. N 510, Հրաչյա Մնացականյանի 24.01.2025թ. N 665, Հովհաննես Խանչալյանի 27.01.2025թ. N 729, Արթուր Ավթանդիլյանի 29.01.2025թ. N 787 և Հակոբ Փիլոյանի 30.01.2025թ. N 815 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Երևանյան փողոց, N 85/8 հասցեում գտնվող, 02-001-0075-0035 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 498քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ /կադաստրային արժեքով/ օտարել կից, ընդլայնվող 02-001-0075-0033 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Մուրադ Սարգսի Մուրադյանին:

2. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 02-113-0260-0127 ծածկագրով 0,0511հա հողամասը /վարելահող/ ուղղակի վաճառքով՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից՝ ընդլայնվող 02-113-0260-0060 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատեր <<ՆԱՅԻՐԻ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ>> ՍՊԸ-ին:

3. Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի 1-ին փողոց, N 64/1 հասցեում գտնվող, 02-112-0026-0023 ծածկագրով 455,4քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի

կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 2 200 000 /երկու միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-112-0026-0020 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Հովիկ Գասպարի Գրիգորյանին:

4. Աշտարակ համայնքի Կոշ բնակավայրի 2-րդ փողոց, N 7/3 հասցեում գտնվող, 02-061-0020-0038 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 196,43քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 314 000 /երեք հարյուր տասնչորս հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-061-0020-0042 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Սամվել Արտուշի Վաղարշակյանին:

5. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մուղնի 5-րդ թաղամաս, N 66/1 հասցեում գտնվող, 02-001-0736-0023 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 352քմ հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված հողամասը ուղղակի վաճառքով՝ 3 128 000 /երեք միլիոն մեկ հարյուր քսանութ հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0361-0012 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Հրաչյա Հունանի Մնացականյանին:

6. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մուղնի 5-րդ թաղամասում գտնվող, 02-001-0311-0019 ծածկագրից, համայնքային սեփականություն հանդիսացող 180,6քմ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ /կադաստրային արժեքի 200%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02-001-0311-0017 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Հովհաննես Արարատի Խանչալյանին:

7. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Աշտարակի խճուղի, N 2/1 հասցեում գտնվող, 02-001-0451-0015 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 904քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 7 000 000 /յոթ միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0451-0011 ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասերի սեփականատեր Արթուր Միշայի Ավթանդիլյանին:

8. Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի 9-րդ փողոց, N 4/1 հասցեում գտնվող, 02-058-0071-0045 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 13,2քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի

վաճառքով՝ 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-058-0071-0035 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Հակոբ Ռաֆիկի Փիլոյանին:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային և պետական սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2025 թվականի մարտի 11-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2025 թվականի փետրվարի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ	_____
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ	_____
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	_____
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ	_____
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	_____
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	_____
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ